

Ֆինանսական միջնորդների շրջանակ (FIF) – ՓՄՁՄՆ ՓԱՊՅ (SMECI RRWA) - ԱՐԴՇԻՆԲԱՆԿ

Երկիր	Հայաստան
Ծրագրի համար	56802
Բիզնես ոլորտ	Բանկեր
Ծանուցման տեսակ	Մասնավոր
Բնապահպանական կատեգորիա	Ֆինանսական հաստատություն (ՖՀ)
Հաստատման ամսաթիվ	Հոկտեմբերի 8, 2025 թ.
Կարգավիճակ	Հայեցակարգը վերանայված է
Անգլերեն տարբերակի հրապարակման ամսաթիվ	Օգոստոսի 20, 2025 թ.

Ծրագրի նկարագրություն

Մինչև 5 միլիոն եվրոյի չափով առաջնային վարկի տրամադրում «Արդշինբանկ» ՓԲԸ-ին՝ Արևելյան գործընկերության շրջանակներում ՓՄՁ մրցունակության և ներառման ծրագրի («Ծրագիր») փախստականների հարցերով արձագանքման պատուհանի շրջանակներում փախստականների կողմից ղեկավարվող բիզնեսներին աջակցելու և տեղական ընկերություններին խրախուսելու փախստականների համար աշխատանքային հնարավորություններ ստեղծելու և նրանց հմտությունների զարգացման մեջ ներդրումներ կատարելու նպատակով՝ նպաստելով երկարաժամկետ ներառական ազդեցությանը: Վարկը կտրամադրվի մինչև 5 տարի ժամկետով:

Ծրագրի նպատակները

Ծրագիրն ուղղված է ներառական տնտեսական աճի խթանմանը՝ աջակցելով փախստականների և տեղահանված անձանց ձեռնարկատիրական գործունեությանը, ինչպես նաև խրախուսելով տեղական միկրո, փոքր և միջին ձեռնարկություններին (ՄՓՄՁ)՝ ստեղծել աշխատատեղեր նրանց համար: Համահունչ լինելով Ծրագրի հիմնական նպատակին՝ աջակցել ՄՓՄՁ-ներին իրենց գործունեությունը ԵՄ չափանիշներին համապատասխանեցնելու գործընթացում, այս գործարքը թույլ կտա տեղական ընկերություններին ներդրումներ կատարել իրենց արտադրական գործընթացների արդիականացման մեջ՝ հատկապես շեշտը դնելով կանաչ տեխնոլոգիաների վրա:

Ակնկալվում է, որ արդիականացմանն ուղղված նշված գործողությունները կնպաստեն հայկական բիզնեսների մրցունակության բարձրացմանը եվրոպական շուկայում, որի շրջանակում ծրագրի ներդրումների առնվազն 70%-ը կծնավորեն «Կանաչ տնտեսության անցման» (GET) չափանիշներին համահունչ ներդրումներ:

Անցումային ազդեցություն

- **Մրցունակ.** «Արդշինբանկը» կընդլայնի իր ՄՓՄՁ վարկային պորտֆելը՝ կենտրոնանալով մարզային միկրո, փոքր և միջին ձեռնարկությունների և նոր հաճախորդներ ներգրավելու վրա:
- **Դիմակայուն.** Ակնկալվում է, որ «Արդշինբանկը» կպահպանի վարկային պորտֆելի բարձր որակը:
- **Ներառական.** Ծրագիրը բարելավում է տեղահանված անձանց ֆինանսական հասանելիությունը և նպաստում նրանց ինտեգրմանը աշխատաշուկայում՝ ՄՓՄՁ-ների միջոցով աշխատատեղերի ստեղծման և հմտությունների զարգացման միջոցով:

Հաճախորդի վերաբերյալ տեղեկատվություն

«Արդշինբանկ» ՓԲԸ

«Արդշինբանկ» ՓԲԸ-ն ՎՁԵԲ-ի երկարամյա գործընկեր բանկերից է: 2024 թ.-ի դրությամբ այն Հայաստանի խոշորագույն բանկն է ըստ ընդհանուր ակտիվների և երկրորդ խոշորագույնը՝ համախառն վարկային պորտֆելի ծավալով՝ 20.9% և 17.7% համապատասխան շուկայական մասնաբաժիններով:

Բանկի վարկանիշներն են՝ BB- (կայուն հեռանկար) ըստ Fitch-ի, Ba3 (կայուն հեռանկար)՝ ըստ Moody's-ի և BB- (կայուն հեռանկար)՝ S&P-ից:

ՎՁԵԲ-ի կողմից տրամադրվող ֆինանսավորում

5,000,000.00 Եվրո

Ծրագրի ընդհանուր արժեք

5,000,000.00 Եվրո

Հավելյալություն

- **Ֆինանսավորման կառուցվածք.** ՎՁԵԲ-ն առաջարկում է ֆինանսավորում, որը շուկայում հասանելի չէ այլ առևտրային աղբյուրներից՝ խելամիտ պայմաններով և դրույթներով:
- **Ստանդարտների սահմանում և ֆինանսական չափանիշներ.** Ծրագիրը նպաստում է ավելի բարձր ֆինանսական չափանիշների ներդրմանը: Համապատասխանությունը ֆինանսական միջնորդների շրջանակի քաղաքականության դրույթներին և ֆինանսական պայմանագրերով սահմանված մի շարք ճկուն պարտավորություններին, ինչպես նաև Բնապահպանական և կայունության բաժնի (ESD) պահանջների իրականացումը կապահովեն վարկային միջոցների նպատակային օգտագործումը, ԲԿԲ լավագույն փորձի կիրառումը և ֆինանսական ռիսկերի կառավարման ամրապնդումը:
- **Նորարարական ֆինանսավորման կառուցվածքներ և/կամ գործիքներ.** ՎՁԵԲ-ն առաջարկում է նորարարական կանաչ ֆինանսավորման գործիք, որը ֆինանսավորման

կառուցվածքում ներառում է այնպիսի ոլորտներ, ինչպիսիք են կլիմայական և բնապահպանական, սոցիալական և կառավարման (ԲՍԿ) չափորոշիչները և/կամ կլիմայական և ԲՍԿ ռիսկերի նկատառումները: Օրինակ՝ վարկային տոկոսադրույքների և/կամ արտոնյալության մակարդակի ճշգրտում՝ կախված կլիմայական ռիսկերից և/կամ դրական կլիմայական ազդեցություններից, ինչպիսիք են ջերմոցային գազերի արտանետումների կրճատումը կամ կլիմայական կայունության ապահովման օգուտները:

- **Ռիսկերի մեղմացում.** Վարկին կից տրամադրվում է առաջնային կորուստների փոխհատուցման մեխանիզմ (first-loss risk cover), որի նպատակն է մասնակիորեն փոխհատուցել Արդշինբանկի ենթավարկերի հնարավոր կորուստները և բարձրացնել նրա ռիսկի հանդուրժողականությունը՝ փախստականների կողմից ղեկավարվող ՄՓՄՁ-ների ֆինանսավորման ուղղությամբ:

Բնապահպանական և սոցիալական ազդեցության ամփոփ նկարագիր

Դասվել է FI կատեգորիայի (Բնապահպանական և սոցիալական քաղաքականություն, 2024թ.):

«Արդշինբանկը» ՎՇԵԲ-ի ընթացիկ հաճախորդներից է և գործում է բնապահպանական և սոցիալական (Բ և Ս) չափանիշների համապատասխան՝ իր ընթացիկ պարտավորությունների շրջանակում: Որպես ՎՇԵԲ-ի ընթացիկ հաճախորդ՝ «Արդշինբանկը» պարտավորվում է հետևել իր բնապահպանական և սոցիալական կառավարման քաղաքականությանը և ընթացակարգերին, որոնք համահունչ են ՎՇԵԲ-ի Բ և Ս պահանջներին: «Արդշինբանկ» ՓԲԸ- ից ակնկալվում է պահպանել իր Բնապահպանական և սոցիալական («ԲևՍ») կառավարման համակարգը՝ իր ենթաձրագրերի հետ կապված ռիսկերն ու ազդեցությունները արդյունավետորեն գնահատելու, կառավարելու և վերահսկելու համար: Ընկերությունը պետք է համապատասխանի ՎՇԵԲ-ի ԳՊ 2, 4 և 9-ին, այդ թվում հետևել ՎՇԵԲ ԲՍ բացառությունների ցուցակին: Արդշինբանկը պարտավոր է նաև Բանկին ներկայացնել տարեկան բնապահպանական և սոցիալական հաշվետվություններ, որոնցում մանրամասն նկարագրվում է ԲՍԴ-ների համապատասխանությունը և տարվա ընթացքում առաջացած ցանկացած բնապահպանական և սոցիալական խնդիրների լուծումները:

Կանաչ գնահատումներ

Ծրագիրը դիտարկվում է որպես համահունչ Փարիզի համաձայնագրին՝ հիմնվելով ՎՇԵԲ-ի Փարիզի համաձայնեցման մոտեցման կիրառման վրա, որը վերաբերվում է անուղղակի ֆինանսավորմամբ ներդրումներին: Համապատասխանության որոշումը սահմանվում է 1-ին հենասյան (համագործակցող կողմի պարտավորությունը Փարիզի համաձայնագրի նկատմամբ) և 2-րդ հենասյան (ենթագործարքների գտիչ) կիրառման պայմանով:

ՎՇԵԲ-ի ֆինանսավորման 70%-ը դասակարգվում է որպես «կանաչ» ֆինանսավորում, քանի որ այն աջակցում է կլիմայի փոփոխության մեղմմանը միտված գործունեությանը: Այս դասակարգումը կատարվում է՝ համաձայն ՎՇԵԲ-ի ներդրումների «կանաչ» ֆինանսավորմանը վերագրման մեթոդաբանության:

Տեխնիկական աջակցություն և դրամաշնորհի ֆինանսավորում

Ծրագիրը ներառում է ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող համապարփակ տեխնիկական աջակցություն: Տեխնիկական աջակցության նպատակն է օժանդակել Հայաստանում գործող ֆինանսական միջնորդներին, այդ թվում՝ «Արդշինբանկին», ծրագրի հաջող իրականացման գործընթացում, ներառյալ մարքեթինգը, ենթ ֆինանսավորումից առաջ և հետո իրականացվող գնահատումները,

ինչպես նաև ընդհանուր մոնիթորինգը և հաշվետվությունը:

Բացի այդ, վարկին կից տրամադրվում է ԵՄ կողմից ֆինանսավորվող 1.5 միլիոն եվրոյի դրամաշնորհ, որը կուղղվի համապատասխանության չափանիշներին բավարարող ենթավարկառույթներին՝ որպես ներդրումային խթաններ: Այս խթանները նպատակ ունեն զարգացնել այնպիսի տեխնոլոգիաների ներդրումը, որոնք համապատասխանում են ԵՄ չափանիշներին՝ հատկապես կենտրոնանալով կայուն և կանաչ տեխնոլոգիաների վրա, միաժամանակ աջակցելով փախստականների կողմից ղեկավարվող բիզնեսներին և խթանելով նրանց ինտեգրումը տեղական տնտեսության մեջ:

Վարկը նաև ապահովված է մինչև 0.5 միլիոն եվրոյի չափով նախնական կորուստների փոխհատուցման մեխանիզմով, որը նախատեսված է «Արդշինբանկի», հնարավոր կորուստների մասնակի փոխհատուցման համար՝ այն ենթավարկերի շրջանակում, որոնք տրամադրվում են փախստականների կողմից ղեկավարվող ՄՓՄՁ-ներին: Այս մեխանիզմը նպատակ ունի բարձրացնել բանկի ռիսկի հանդուրժողականությունը՝ նման վարկավորման ուղղությամբ:

Ընկերության կոնտակտային տվյալները

Դավիթ Սարգսյան

office@ardshinbank.am

+37412222222

<https://www.ardshinbank.am/>

Գրիգոր Լուսավորիչի փող. 13, 0015 Երևան, Հայաստանի Հանրապետություն

Անցումային շրջանի ընկալումը

[Այստեղ](#) կարող եք լրացուցիչ տեղեկություններ գտնել առ այն, թե ինչ մոտեցումներ է կիրառում ՎՉԵԲ-ը անցումային շրջանում առաջընթացի վրա ազդեցությունը չափելու համար:

Բիզնես հնարավորություններ

Բիզնես հնարավորությունների կամ գնումների համար դիմե՛ք հաճախորդի ընկերությանը:

ՎՉԵԲ-ի հետ կապված (գնումներին չառնչվող) բիզնես հնարավորությունների համար դիմե՛ք.

Հեռ.՝ +44 20 7338 7168

Էլ-փոստ՝ projectenquiries@ebrd.com

Պետական ոլորտում ծրագրերի համար այցելե՛ք [ՎՉԵԲ-ի գնումներ](#):

Հեռ.՝ +44 20 7338 6794

Էլ-փոստ՝ procurement@ebrd.com

Ընդհանուր հարցումներ

Կարող եք անել կոնկրետ հարցումներ՝ օգտագործելով [ՎՉԵԲ-ի հարցումների ձևաթուղթ](#):

Բնապահպանական և սոցիալական քաղաքականություն (ԲՍՔ)

[ԲՍՔ-ն](#) և դրա հետ կապված՝ Գործունեության նկատմամբ պահանջները (ԳՊ-ներ) սահմանում է այն ուղիները, որոնց միջոցով ՎՉԵԲ-ն իրականացնում է իր հանձնառությունը՝ խթանել «Էկոլոգիապես

առողջ և կայուն զարգացումը»։ ԲՍԶ-ն և ԳՊ-ները պարունակում են հատուկ դրույթներ, ըստ որոնց հաճախորդները պետք է համապատասխանեն տեղեկությունների հրապարակայնացման և խորհրդատվության մասին ազգային օրենքների կիրառվող պահանջներին, ինչպես նաև ստեղծեն բողոքարկման մեխանիզմ՝ շահագրգիռ կողմերի մտահոգությունները և բողոքները ստանալու և լուծումները դյուրացնելու նպատակով, մասնավորապես, հաճախորդի և ծրագրի կողմից բնապահպանական և սոցիալական ասպեկտների կատարողականի վերաբերյալ։ Կախված ծրագրի բնապահպանական և սոցիալական ռիսկերի և ազդեցությունների բնույթից և մասշտաբից, ՎՇԲ-ը լրացուցիչ պահանջում է, որ իր հաճախորդները, անհրաժեշտության դեպքում, տեղեկություն հրապարակեն ծրագրից բխող ռիսկերի և ազդեցությունների մասին կամ բովանդակալից խորհրդակցություններ անցկացնեն շահագրգիռ կողմերի հետ, դիտարկեն նրանց կարծիքներն ու արձագանքն դրանց։

Այս կապակցությամբ ՎՇԲ-ի գործելակերպի վերաբերյալ ավելի մանրամասն տեղեկությունները ներկայացված են [ԲՍԶ](#)-ում։

Բարեվարքություն և համապատասխանություն

ՎՇԲ-ի՝ Համապատասխանության վերահսկման գլխավոր տնօրենի գրասենյակը (ՀՎԳՏԳ) խթանում է լավ կառավարումը և ապահովում բարեվարքության բարձրագույն չափանիշների կիրառումը Բանկի գործունեության բոլոր ասպեկտներում՝ միջազգային լավագույն փորձի համաձայն։ Բանկի բոլոր հաճախորդների վերաբերյալ իրականացվում է բարեվարքության պահանջներին համապատասխանության ստուգում-ուսումնասիրություն՝ համոզվելու, որ ծրագրերը չեն պարունակում Բանկի համար անընդունելի ռիսկեր բարեվարքության կամ հեղինակության առումով։ Բանկի համոզմամբ, ծրագրի գնահատման և հաստատման փուլերում խնդիրների հայտնաբերումն ու լուծումը Բանկի գործարքների բարեվարքության ապահովման ամենաարդյունավետ միջոցներն են։ ՀՎԳՏԳ-ն առանցքային դեր է կատարում պաշտպանիչ այս գործողություններում, ինչպես նաև օգնում է վերահսկել բարեվարքությանն առնչվող ռիսկերը ծրագրերի հետներդրումային փուլերում։

ՀՎԳՏԳ-ն նաև պատասխանատու է ՎՇԲ-ի կողմից ֆինանսավորվող ծրագրերում կեղծիքի, կոռուպցիայի և չարաշահման կապակցությամբ մեղադրանքների հետաքննության համար։ Ցանկացած անձ, ինչպես Բանկի ներսում, այնպես էլ նրանից դուրս, ով կասկածներ ունի, որ առկա են կեղծիքի կամ կոռուպցիայի դեպքեր, պետք է գրավոր զեկույց ներկայացնի Համապատասխանության վերահսկման գլխավոր տնօրենին [Էլ-փոստով՝ compliance@ebrd.com](mailto:compliance@ebrd.com)։ Խնդիրների մասին բոլոր զեկույցները կքննվեն ՀՎԳՏԳ-ի կողմից՝ հետագա քայլերը որոշելու նպատակով։ Քննվելու են բոլոր զեկույցները, այդ թվում՝ անանուն զեկույցները։ Չեկույցները կարող եք ներկայացնել Բանկի կամ Բանկի գործունեության ցանկացած երկրի լեզվով։ Տեղեկությունը տրամադրելիս անհրաժեշտ է դրսևորել բարեխիղճ մոտեցում։

Տեղեկությունների հասանելիության քաղաքականություն (ՏՔԶ)

ՏՔԶ-ն սահմանում է, թե ինչպես է ՎՇԲ-ը հրապարակայնացնում տեղեկությունները և խորհրդակցում շահագրգիռ կողմերի հետ, որպեսզի 2020թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտնելուց հետո նպաստի ՏՔԶ-ի ռազմավարությունների, քաղաքականությունների և գործառնությունների մասին ավելի լավ իրազեկմանն ու ընկալմանը։ Խնդրում ենք այցելել [Տեղեկությունների հասանելիության քաղաքականության](#) կայքէջը՝ պարզելու, թե ինչ տեղեկություն կա ՎՇԲ-ի կայքում։

Տեղեկություններ ստանալու համար կարող եք կոնկրետ հարցումներ ներկայացնել՝ օգտագործելով [ՎՇԲ-ի հարցումների ձևաթուղթը](#)։

Ծրագրերի հաշվետվողականության անկախ մեխանիզմ

(ԾՅԱՄ)

Եթե Հաճախորդի կամ Բանկի հետ բնապահպանական և սոցիալական ասպեկտների կամ հրապարակայնացման հետ կապված խնդիրների լուծմանն ուղղված ջանքերն (օրինակ, Հաճախորդի՝ Ծրագրի մակարդակով բողոքարկման մեխանիզմի կամ Բանկի ղեկավարության հետ անմիջական ներգրավման միջոցով) ապարդյուն են, ապա անհատներն և կազմակերպությունները կարող են դիմել ՎՉԵԲ-ի՝ Ծրագրերի հաշվետվողականության անկախ մեխանիզմին (ԾՅԱՄ)՝ իրենց մտահոգող խնդիրների լուծումը ստանալու համար:

ԾՅԱՄ-ն անկախ եղանակով քննում է Ծրագրի հետ կապված խնդիրները, որոնք, ենթադրաբար, վնաս են պատճառել (կամ, հավանաբար, կարող են վնաս պատճառել): Մեխանիզմի նպատակն է. աջակցել Ծրագրի շահագրգիռ կողմերի միջև երկխոսությանը՝ շրջակա միջավայրի, սոցիալական ասպեկտների և հրապարակայնացման հետ կապված խնդիրները լուծելու նպատակով, պարզել, արդյոք Բանկը համապատասխանել է իր իսկ [Բնապահպանական և սոցիալական քաղաքականությանը](#) կամ իր՝ [Տեղեկությունների հասանելիության քաղաքականության](#)՝ Ծրագրին վերաբերող կոնկրետ դրույթներին, և, անհրաժեշտության դեպքում, վերացնել այդ քաղաքականություններին վերաբերող ցանկացած անհամապատասխանություն՝ միաժամանակ կանխելով Բանկի անհամապատասխանության դեպքերն ապագայում:

Խնդրում ենք այցելել [Ծրագրերի հաշվետվողականության անկախ մեխանիզմի կայքէջը](#)՝ իմանալու ավելին ԾՅԱՄ-ի և նրա լիազորությունների մասին, ինչպես [Դիմում ներկայացնել](#) ստուգում անցկացնելու համար, կամ կապ հաստատել ԾՅԱՄ-ի հետ էլ-փոստով ipam@ebrd.com՝ ԾՅԱՄ-ի և դիմում ներկայացնելու վերաբերյալ ուղղորդում և լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար: